

## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ



### **Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների Եռամյա ծրագրի կատարման հաշվետվության մասին**

Հաշվետվությունը մշակվել և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով՝ ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների պահանջների և արտացոլում է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Եռամյա ծրագիր) սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը:

Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները մշակվել և իրականացվել են հաշվի առնելով երկրի ցուցանիշների՝ միջազգային վիճակագրական չափանիշների հետ համադրելիությունը, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով՝ ցուցանիշների հնարավոր կայուն պարբերականությունը, ինչպես նաև պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով նախատեսված միջոցառումների (աշխատանքների) իրագործման ենթատեքստով՝ պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների (ֆինանսավորման) հետ համաչափությունը:

Եռամյա ծրագրով սահմանված ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումները «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված պահանջների համաձայն, արտացոլվել են պետական

վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերում, որոնք յուրաքանչյուր տարի հաստատվել են ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ ՀՀ ՎՊԽ) կողմից՝ ՀՀ պետական բյուջեի հաստատումից հետո մեկամսյա ժամկետում և հրապարակվել (ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի 2004թ. թիվ 9(157), 2005թ. թիվ 4<sup>1</sup> և 2006թ. թիվ 4<sup>1</sup> տեղեկագրերում):

Եռամյա և տարեկան ծրագրերն ու դրանց կատարման հաշվետվությունները գետեղված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) ինտերնետային էջի հետևյալ՝ <http://www.armstat.am/arm/Law> հասցեում:

Հիմք ընդունելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված աշխատանքները (միջոցառումները), հաշվետու ժամանակահատվածում նախատեսված և իրականացման ենթակա աշխատանքների ընդհանուր ծավալը (հաշվի առած պարբերականությունը) կազմել է 5561 միավոր (այդ թվում ըստ տարիների՝ համապատասխանաբար 1793, 1828 և 1940), որից՝ ծրագրերով սահմանված ժամկետներում իրականացվել են 5556-ը (այդ թվում ըստ տարիների՝ համապատասխանաբար 1790, 1826 և 1940) կամ ընդամենի 99,9 տոկոսը: Սահմանված ժամկետներում չկատարված 5 աշխատանքները (ընդամենի 0,1 տոկոսը) կատարվել են ուշացումներով: Ժամկետային գործոնը հաշվի չառած, հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 5561 միավոր աշխատանքից կատարվել են բոլորը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրերով նախատեսված միջոցառումները ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհներից:

2004-2006 թվականների համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվել է ֆինանսավորում ընդամենը 1860.2 մլն դրամի չափով, այդ թվում՝ 2004թ.՝ 572.5 մլն դրամ, 2005թ.՝ 580.3 մլն դրամ և 2006թ.՝ 707.4 մլն դրամ, հատկացվել է ընդամենը՝ 1794.3 մլն դրամ՝, այդ թվում՝ 2004թ.՝ 546.8 մլն դրամ, 2005թ.՝ 549.7 մլն դրամ և 2006թ.՝ 697.8 մլն դրամ, հատկացումը նախատեսվածի նկատմամբ կազմել է 96.5%, այդ թվում՝ 2004թ.՝ 95.5%, 2005թ.՝ 94.7% և 2006թ.՝ 98.7%: Դրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի գերակշիռ մասի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է դոնոր կազմակերպությունների և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից: Ծառայության կողմից ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է ընդամենը՝ 148.5 մլն. դրամի, այդ թվում ըստ տարիների՝ 2004թ.՝ 101.6 մլն. դրամի, 2005թ.՝ 5.3 մլն. դրամի, 2006թ.՝ 41.6 մլն. դրամի չափով:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է Խորհրդի 56 նիստ (այդ թվում՝ 2004թ.՝ 16, 2005թ.՝ 20 և 2006թ.՝ 20): Նիստերի ընթացքում քննարկվել է 258 հարց (այդ թվում՝ 2004թ.՝ 86, 2005թ.՝ 83 և 2006թ.՝ 89) և արդյունքում ընդունվել 262 որոշում (այդ թվում՝ 2004թ.՝ 108, 2005թ.՝ 80 և 2006թ.՝ 74 որոշում), որից՝ 111 նորմատիվ (այդ թվում՝ 2004թ.՝ 42, 2005թ.՝ 46 և 2006թ.՝ 23), 61 անհատական (այդ թվում՝ 2004թ.՝ 16, 2005թ.՝ 14 և 2006թ.՝ 31) և 90 արձանագրային (այդ թվում՝ 2004թ.՝ 50, 2005թ.՝ 20 և 2006թ.՝ 20):

Ծառայության կողմից, ըստ տարիների հրապարակվել և վիճակագրական տեղեկատվության սպառողներին են տրամադրվել (ներառյալ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական գեկույցը (հայերեն և ռուսերեն)) հետևյալ քանակի վիճակագրական նյութեր. 2004թ.՝ 73, 2005թ.՝ 85 և 2006թ.՝ 75 անուն և ըստ տպաքանակների կազմել 2004թ.՝ 26610, 2005թ.՝ 11650 և 2006թ.՝ 12040 միավոր:

Վիճակագրական հրապարակումները զետեղվել են նաև ՀՀ ԱՎԾ քաղաքապետարանում (գրադարանային ֆոնդը 01.01.2007թ. դրությամբ կազմել է 8210 միավոր) և 1999թ. ապրիլից գործող ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջում:

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայություն են այցելել թվով 46 հանձնախմբեր և 69 փորձագետներ (այդ թվում, 2004թ.՝ 16 (22), 2005թ.՝ 8 (17), 2006թ.՝ 22 (30)): Ծառայության աշխատակիցները մասնակցել են արտասահմանյան երկրներում կազմակերպված և վիճակագրության բոլոր բնագավառներին անչվող վերապատրաստման դասընթացների, աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների, առանձին թեմատիկ քննարկումների և այլ միջոցառումների (այցեմասնակցությունների թիվը՝ 165, այդ թվում՝ 2004թ.՝ 58 (18 արտասահմանյան երկրում), 2005թ.՝ 42 (12 արտասահմանյան երկրում), 2006թ.՝ 65 (37 արտասահմանյան երկրում)):

Հայաստանում կազմակերպված նմանատիպ միջոցառումներին (տեղային սեմինարներ, դասընթացներ, շնորհանդեսներ, աշխատանքային հանդիպումներ և այլն) այցեմասնակցությունների թիվը կազմել է 428: Իսկ ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպված թվով 12 սեմինար-խորհրդակցություններին այցեմասնակցությունների թիվը կազմել է 382:

Միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 431 (այդ թվում՝ 2004թ.՝ 149, 2005թ.՝ 113, 2006թ.՝ 169) պաշտոնական հանդիպումներ:

Ծառայության միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Խորհրդի նորմատիվ որոշումների, որպես գերատեսչական նորմատիվ ակտ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում պետական գրանցման գործընթացը: Գրանցվել են ընդհանուր թվով 111 նորմատիվ իրավական ակտեր (որից՝ 92 վիճակագրական դիտարկման փաստաթղթեր ու դրանց լրացման հրահանգներ կամ դրանց փոփոխություններ ու լրացումներ), այդ թվում ըստ տարիների՝ 2004թ.՝ 42 (37), 2005թ.՝ 46 (41) և 2006թ.՝ 23 (14): Խորհրդի արձանագրային որոշումներով հավանություն է տրվել ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական թվով 34 հաշվետվությունների ձևերի:

Իրականացված աշխատանքներից կարևորությամբ և/կամ մասշտաբայնությամբ, մասնավորապես հիշատակման են արժանի.

Եվրամիության անդամ երկրներում կիրառվող համանման դասակարգիչների հենքի վրա՝ «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների», Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի վերանայված տարբերակի (համապատասխանում է Եվրամիության անդամ երկրներում կիրառվող Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «Վերանայում 1.1» տարբերակին) և «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» ազգային դասակարգիչների մշակումը, հաստատումն ու ներդրումը:

«Եվրոպական հաշիվների համակարգ-95»-ի մեթոդաբանության ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որի առնչությամբ Հայաստանի ազգային հաշիվներում անցում է կատարվել Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ու դրանց խմբավորումների Ա3, Ա6 և Ա17 ձևաչափերի ներդրմանը:

Ազգային հաշիվների համակարգի՝ ֆինանսական հաշվի փորձական կազմումը:

Միկրովիճակագրության մակարդակում Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ամբողջական ներդրումն ու Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակներ Հայաստանի դասակարգչի աստիճանական նեղրման նախադրյալների ձևավորումը:

Սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար բազիսային տարվա փոփոխությունը (2002թ. փոխարեն բազիսային տարի է ընդունվել 2005թ.) և դիտարկման «զամբյուղը» ներկայացնող ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների կազմի ու կառուցվածքի վերանայումն ու համալրումը:

Անմիջական մասնակցությունը համախառն ներքին արդյունքի և արտարժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային համադրումների Եվրոպական ծրագրի աշխատանքներին:

Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտով (որպես վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկի) սահմանված նախապայմանների ապահովման ենթատեքստով՝ ցուցանիշների և դրանց մեթատվյալների ու համառոտ մեթոդաբանությունների շարունակական վարումն ու արդիականացումը:

**ՀՀ Վիճակագրության պետական խորհուրդ**